

Մարիամ Վ. Հովսեփյան  
բանաս. զիս. թեկնածու

### ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՇՍԿԱԿԻՐԸ

Կ. Պոլսի «Ազատամարտ» օրաթերթի 100-ամյակի առիթով\*

1909թ. հունիսի 10 (23)-ին Կ. Պոլսում սկսեց լուս լուսնել ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի պաշտոնարերը «Ազատամարտ» օրաթերթը, որի վերջին՝ 1815-րդ համարը բռնագրավվեց Մեծ եղեռնի առաջին օրը՝ 1915թ. ապրիլի 11(24)-ին:

«Ազատամարտը» 20-րդ դարի սկզբներին բուռն վերելք ապրող հայկական մշակույթի ամուր հիմքերի վրա ճնապիրված այն օրաթերթն էր, որն իր շուրջը համախմբեց արևմտահայ, մասամբ նաև՝ արևելահայ մտավորականության ընտրանուն: Դաշնակցական մտավորականներին նոր սերմանի լայն ներգրավման ճանապարհով ու միաժամանակ՝ իր խմբագրակազմի և աշխատակիցների մասնագիտական որակներն օգտագործելով, պատմականորեն համեմատաբար կարճ ժամանակամիջոցում այն դարձավ ժամանակի արևմտահայ մամուլի դրոշակակիրը:

«Ազատամարտի» բավականին մեծաքիչին հաստիքային և արտահաստիքային աշխատակազմը իր պարտականությունները կատարեց ընդհուպ օրաթերթի վերջին համարի լուս ընծայման օրը՝ 1915թ. ապրիլի 24-ը<sup>2</sup>: Նրա արտոնատերը, պատախանատու տնօրենն ու խմբագիրն էր արևմտահայ անվանի հասարակական-քաղաքական գործիչ, արձակագիր Ռուբեն Զարդարյանը: ՀՅԴ Արևմտյան Բյուրոն խոհեմարտը էր վարչել՝ խմբագիր ընտրելով Ռ. Զարդարյանին, քանզի հիմնականում հենց նրա շնորհիվ «Ազատամարտը» չվերածվեց նեղ կուսակցական օրաթերթի: «Թերբր իր շնորհի կուսակցութեան մը օրգանը չեղաւ միայն, այլ՝ հայ ժողովուրդի առողջ բնագրներուն ամբողջական արտայայտութիւնը, հայ մտքին ճիգերուն ասպարեզը: Զարդարեան խմբագրապետն էր թերթին, Կ. Պոլսոյ Պատախանատու Մարմնի անմիջական հսկողութեան տակ: Այդ իրաւասութիւնը անցաւ յետոյ Արևմտեան Բիութին, երբ ան 1909-ի Վառնայի Ընդիանուր ժողովին ետք փոխադրուեաւ Պոլսի: «Ազատամարտ» միշտ ալ Արևմտեան Բիութին կապուած մնաց,

\* Ընդունվել է տպագրության 11.06.2009:

<sup>1</sup> Ավելի մանրամասն տես «Ղայենիք» անսագիր, Պուստը, 1924, թիվ 9, էջ 112-120, 1925, թիվ 3, էջ 28-44:

<sup>2</sup> Տես նույն տեղում, 1924, թիվ 12, էջ 115-137:

հակառակ որ լոյս կը տեսներ Պոլիս, և Պոլսոյ շրջանը իր ուրոյն Կեդրոնական Կոմիտէն ունէր<sup>3</sup>:

«Ազատամարտի» խմբագրական քարտուղարությունը փոխեփոխ ստանձնեցին Գեղամ Բարսեղյանը, Շավարշ Սիսաբյանը, Հակոբ Սիրումին: Թերթի հիմնական աշխատակիցներն էին Խաչատրով Մալումյանը (Է.Ակնոնի), Հարություն Շահրիկյանը (Ասոն), Գեղամ Բարսեղյանը, Բարսեղ Շահբազը, Գասպար Իփերյանը, Ներսես Փափազյանը:

«Ազատամարտի» աշխատակազմը պարբերաբար փոխվել է: Նրա աշխատանքներին մասնակցել են Ս.Զավարյանը, Հ.Համբարձումյանը, Ռ.Դարբինյանը, Ռ.Լեռնյանը, Ա.Խաչատրյանը, Ս.Սինասյանը, Հ.Մանուկյանը, Լ.Մողյանը, Ս.Սրբնցը և այլը: Ընդհանուր առմամբ թերթն ունեցել է 6 անդամից բաղկացած խմբագրական մարմին, որոնք «Ազատամարտի» վարչության 3 անդամների հետ դեկավարել են ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի պաշտոնարերը: Իսկ ահա «Ազատամարտի» վարչական հոգսերով գրադպում էին Կարապետ Փաշայանը, Սարգիս Օհանջանյանը (Ֆարիատ) և Հայկ Թիգրյաջյանը (Հրաչ): Վերջինս թերթի մատակարարման գործը վարեց մինչև նրա փակման օրը:

«Ազատամարտն» ունեցել է նաև բարգմանիչներ, լրաբերներ ու բղբակիցներ (այդ թվում՝ արտահաստիքային) Օսմանյան կայսրության տարբեր մասերում, այդ թվում՝ Արևմտյան Հայաստանում և այլ երկրներում: «Ազատամարտի» էջերում հանդես է եկել ժամանակի հայ մտավորականության սերուցքը՝ Գ.Չոհրապը, Վարուժանը, Սիամանքոն, Ավ.Խասհակյանը, Ռ.Սևակը, Ա.Ռարոնյանը, Զ.Եսայանը, Գ.Տեր-Կարապետյանը (Մշո Գեղամ), Գ.Խաժակը, Ա.Վուամյանը, Մ.Վյուրճյանը, Մ.Վարանդյանը, Լ.Շանթը և ուրիշներ: Իր շորջը հանախմբված մտավորականների մի այսպիսի շքետ համաստեղություն թերևս չի ունեցել հայ մամուլի որևէ այլ օրգան:

ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի պաշտոնարերն ու «Ազատամարտ» է անվանակրոչվել Խաչատրով Մալումյանի առաջարկով: Տպագրվել է Բերայի Ենի Չարշը փորոցի թիվ 32 հասցեում այդ նպատակով կառուցված Ասոն Շահենի տպարանում: Նույն շենքում էր գտնվում ՀՅԴ պաշտոնատեղին: Հետազայում՝ 1910 թվականին, երբ կոսակցությունը իր սեփական տպարանը բացեց Համալ Պաշը փորոցի թիվ 74 շենքում (տնօրեն՝ Հայկ Թիգրյան), այնուղի փոխադրվեցին ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի գրասենյակը, «Ազատամարտի» խմբագրությունը և տպարանը (խմբագրության գետնահարկ-նկուղում): Խմբագրության հենց այս շենքից են 1915թ. ապրիլի 24-ի կեսօնից հետո ձերբակալել և բանտարկել «Ազատամարտի» վերջին (թիվ 1815), այդպես էլ լոյս չտեսած համարի վրա աշխատող հերքալահ խմբագրին, գրաշարին, մեքենավարին, թերենակրին ու դրանապանին: Թերթի մնացած աշխատակիցներին (գրեթե բոլորին) ձերբակալել են իրենց բնակարաններում: Վերջիններիս ճակատագիրն արդեն կանխորոշված էր՝ նահատակություն հարազատ ժողովրդի հետ: Նույն օրվա կեսօնից հետո ոստիկանները բռնագրավել ու բալանել են խմբագրության շենքը (այդ թվում՝ դրամարկրություն գունված 400 ոսկին, «Ազատության մատենաշարի» գրքերի պահեստը)<sup>5</sup>:

<sup>3</sup> Տես նոյն տեղում, 1924, թիվ 3, էջ 67-71, թիվ 5, էջ 93-97:

<sup>4</sup> Տես նոյն տեղում:

<sup>5</sup> Տես նոյն տեղում, 1924, թիվ 12, էջ 115-137:

Ապրիլի 24-ին ձերբակալվածների ու նահատակվածների թվում էր նաև Ո.Չարդարյանը, որը 1915թ. մարտին հրաժարվել էր հեռանալ Կ. Պոլսից արտերկի՝ փրկելու համար իր կյանքը: Նա այսպես էր պատասխանել Թուրքիայից հեռանալու առաջարկով իրեն դիմած գործընկերոջը. «Հրաչն ու ես չենք կրնար Պոլիսը բողոք: Հրաչը պետք է մնա իրեն վստահված պարտականության գոտիսը, իսկ ես «Ազատամարտի» գլուխը աետք է ըլլամ մինչև իր վերջին օրը»<sup>6</sup>:

Լինելով ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի պաշտոնաթերթը, բայց միաժամանակ նաև՝ արևմտահայ ու Կ. Պոլսում հաստատված արևելահայ լավագույն մտավորականների ժամադրավայրը, «Ազատամարտը» հետևողականորեն պաշտպանում էր կուսակցության ծրագրային դրույթները, իիմնավորում Օսմանյան կայսրությունը և աշխարհում կատարվող իրադարձությունների վերաբերյալ նրա դիրքորոշումները: Եվ դրանում որևէ հակասություն չկար, քանզի հենց ինքը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, ժամանակի հայ մտավորականության ընտրանուն համախմբող կուսակցությունն էր:

Սահմանելով իր գործունեությանն նպատակները, «Ազատամարտը» նշում էր, որ որպես քաղաքական կուսակցության պաշտոնաթերթ, ինքն օժտված է որոշակի առաքելությամբ՝ նպաստել արդարության, ժողովրդավարության և սահմանադրական կարգերի հաստատմանը Թուրքիայում<sup>7</sup>:

1909թ. հունիսի 10-ին լոյս տեսած անդրանիկ համարի խմբագրականը մատնանշում էր, որ օրաթերթը, իբրև գաղափարական, շիտակ ու ժողովրդանվեր մամուլի ներկայացուցիչ, նեկավարվելով «Ամեն ինչ ժողովրդի համար և ժողովրդի միջցոցով» նշանաբանով, ձգտելու է օսմանահապատակ ազգերի իրավահավասար գործակցությանը, պետության արմատական բարենորոգմանը, արևմտահայության կենսամակարդակի բարձրացմանը<sup>8</sup>: «Ազատամարտը», այս ամենին զուգահեռ, լինելու էր հայ մտավորականությանը հուզող խնդիրների արտահայտիչը<sup>9</sup>:

Թերթի վեցամյա գործունեությունը հանողում է, որ նա հավատարիմ է մնացել իր սկզբունքներին<sup>10</sup>: ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի պաշտոնաթերթի տեսադաշտից չի վրիպել որևէ հրատապ հարց: «Ազատամարտը» վերլուծել է օսմանյան խորհրդարանի, կառավարության տարրեր գերատեսչությունների աշխատանքները՝ հանդես գալով կառուցողական առաջարկներով, հատկապես՝ երբ խոսքը վերաբերում էր հայ պատգամավորների գործունեությանը: Մշտապես անդրադարձել է արևմտահայերի ներքին կյանքի խնդիրներին, Հայոց Ազգային խորհրդի, քաղաքանական հիմնահարցերին: Վերլուծությունները կատարվում էին հետևյալ նշանաբանով. «Ով ժողովրդի հետ է, մեր բարեկամն է, իսկ ով ժողովրդի դեմ է, մեր թշնամին է»<sup>11</sup>:

«Ազատամարտը» առաջնահերթ լուծման սպասող խնդիր էր համարում հայոց բնօրրանի հայաբախմանը և հայության ուժացմանը նպաստող արտագործի

<sup>6</sup> Նոյն տեղում, 1925, թիվ 3, էջ 28-44:

<sup>7</sup> Տես «Ազատամարտ», 1909, թիվ 7:

<sup>8</sup> Տես նոյն տեղում, թիվ 1:

<sup>9</sup> Տես նոյն տեղում, թիվ 3:

<sup>10</sup> Նոյն տեղում, 1909, թիվ 7, թիվ 8:

<sup>11</sup> Նոյն տեղում, 1910, թիվ 304:

ալիքի դեմն առնելու առաջադրանքը: Բազմաթիվ հրապարակումներում ներկայացվում էին այդ մտահոգիչ երևոյթի դրդապատճառները, դրանից ծնվող անցանկալի հետևանքները: Թերքը կոչ էր անում ժողովրդին՝ «մնալ իր հողին վրայ, քանի զարդը սպաննիչ է»<sup>12</sup>, որովհետև առանց հայի չկա Հայաստան<sup>13</sup>: Նրա համոզմամբ՝ զարդի հիմքում ընկած էր հողային հարցը: Դժվար է գտնել որևէ համար, որում օրաբերք գոնե մեկ հողված կամ լուր տպագրած չինի այս խնդրի վերաբերյալ: Հիշատակենք միայն Ատոմի (Հ Շահրիկյան) գրած «Պետական վերանորոգությունն ու հողային հարցը» վերմագրով հողվածաշարը<sup>14</sup>:

ՀՅԴ Արևատյան Բյուրոյի պաշտոնաթերքը հանդես էր զալիս հողային խնդրի լուծման արդյունավետ առաջարկներով՝ տպագրելով ՀՅԴ 6-րդ Ընդհանուր ժողովի որոշումների այն քաղվածքները, որոնք առնչվում էին հողային հարցին<sup>15</sup>: «Ազատամարտը» հողային և կրթական ու զինվորագրության հիմնահարցերը չլուծված մնալու համար մեղադրում էր բուրքական կառավարությանը և տեղական իշխանություններին: Հատուկ ուշադրություն էր դարձնում դրանց լուծման նպատակով ՀՅԴ մշակած մարտավարությանը՝ հանրությանը ներկայացնելով կուսակցության գործունեության ծրագրերը<sup>16</sup>:

«Ազատամարտն» ընթացել է ճշմարտության և ազգային համերաշխության ճանապարհով<sup>17</sup>: Այս հատկանիշների շնորհիվ վաստակել է ընթերցողների համակրանքը: Եղել է սիրված ու զնահատված թերթ՝ ուրույն դիմագծով: Դրանում, անշուշտ, մեծ դեր է խաղացել ՀՅԴ-ի գործելակերպը: Այդ տարիներին Դաշնակցությունը ուներ պատգամավորներ օսմանյան խորհրդարանում, ներկայացուցիչներ՝ Ազգային ժողովում:

Բնական է, որ իբրև ՀՅԴ-ի պաշտոնաթերթ, «Ազատամարտը» գտնվում էր կառավարական շրջանակների շնորհիվ վաստակել է ընթերցողների համակրանքը: Եղել է սիրված ու զնահատված թերթ՝ ուրույն դիմագծով: Դրանում, անշուշտ, մեծ դեր է խաղացել ՀՅԴ-ի գործելակերպը: Այդ տարիներին Դաշնակցությունը ուներ պատգամավորներ օսմանյան խորհրդարանում, ներկայացուցիչներ՝ Ազգային ժողովում:

«Ազատամարտը» հրատարակել է նաև այլ անվանումներով՝ «Առաջամարտ» (1912թ.), «Բյութանիա» (1912-1913թք.), «Ազդակ» (1912-1913թք.), «Բագին»

<sup>12</sup> Տույն տեղում, 1909, թիվ 6:

<sup>13</sup> Տես նոյն տեղում, 1909, թիվ 13:

<sup>14</sup> Տես նոյն տեղում, 1909, թիվ 118-143:

<sup>15</sup> Տես նոյն տեղում, 1912, թիվ 792:

<sup>16</sup> Տես նոյն տեղում, 1912, թիվ 822:

<sup>17</sup> Տես նոյն տեղում, 1909, թիվ 1:

<sup>18</sup> Տես Ս.Կարանդեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պատմութիւն, Գահիրէ, 1950, հ. 2, էջ 22:

<sup>19</sup> Տես «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1924, թիվ 12, էջ 116-121:

(1912թ.), «Մեղու» (1913թ.), «Շամբ» (1913-1914թթ.) և «Շակատամարտ» (1914թ.)<sup>20</sup>:

Երբ ծանրանում ենք ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի պաշտոնաքերքի ծրագրային հոդվածներին, խմբագրականներին, զավառներից ուղարկված թղթակցություններին, տեսնում ենք, որ «Ազատամարտը» երբեք չի շեղվել կուսակցության հիմնական ուղղեգծից: Օրաքերքի կարծիքով՝ պետության առաջնորդացի միակ երաշխիքը սահմանադրությունն ընկալելն ու նրա դրույթների իրականացումն է. «Սահմանադրական բեմիմը պետք է ըլլայ ազդակ բոլորին համար. այժմ չի կրնար և պէտք չէ ըլլայ տիրող և տիրուող...Հաւասար քաղաքացիներ, հաւասար արդարութիւն»<sup>21</sup>: Առաջին համարներից սկսած՝ «Ազատամարտը» ներկայացնում էր սահմանադրական երկրի մասին իր պատկերացումները:

Կարծում ենք՝ հետաքրքիր է իմանալ, թե ինչպէս է զնահատել թերքը 1908թ. երիտրուքական հեղաշրջումը և արևմտահայերի անվտանգությունն ապահովող ի՞նչ միջոցներ է մատնանշել: «Ազատամարտը» դժգոհել էր իրերի դրվագից. «Այսօր համարե՞նք...Վտանգը անցած և երկիրը ազատութեան ճշմարիտ ճանապարհի վրայ»<sup>22</sup> հարցին ի պատասխան թերքը նշում էր, որ օսմանյան պետությունը շատ անշան փոփոխություններ է կրել՝ չհաշված առատ խոստումներն ու «ինշալլահները»:<sup>23</sup> Կառավարությունը շարունակում էր բորբքել ազգամիջյան ընդհարումներ, կազմակերպում ջարդեր, կոտորածներ, ավեր ու քալան, գենքի միջոցով «խելոքացնում» ապստամբներին: Խորհրդարանն ընդունում էր մեկը մյուսից հակասահմանադրական օրենքներ, որոնցով սահմանափակում էր քաղաքական կուսակցությունների, հասարակական միությունների, կազմակերպությունների իրավասությունները, ոտնահարում խոսքի, մամուլի, խոճի ազատությունը: Նաև 1909թ. ընդունած որոշմամբ միապետին հնարավորություն էր տրվում ըստ իր կամեցողության՝ հրաժարականի միջոցով լուծարել խորհրդարանը.<sup>24</sup>

1909թ. թիվ 104-ի «Այսօր» բաժնում տպագրված հոդվածը կրում է «Գրաբնություններ վերահաստատված» վերնագիրը: Ունացնություններ էին կատարվում մամուլի ազատության դեմ, իսկ ըստ «Ազատամարտի»՝ առանց մամուլի ազատության չկա հասարակական կարծիք ու առաջադիմություն:<sup>25</sup> Արդեն 1910թ. հուլիսի 10-ի խմբագրականում զնահատելով երիտրուքական հեղաշրջման հերթական տարերածքը, թերքը գրում է ծայր առած հիասքափորյունների, իշխող և հպատակ ազգերի հետ համագործակցության խստումները մոռացության տրվելու մասին: «Ազատամարտը» համոզված էր, որ ելքը սահմանադրությունը կիրառելն է, քանզի այն միայն թղթի վրա գրված օրենքների հավաքածու չէ: Սահմանադրությամբ ամրագրված հավասարությունը և մյուս գեղեցիկ բառերը մեռած

<sup>20</sup> Տես «Հայոց պարերական մամուլը», Երևան, 1934, էջ 57, «Հայ պարերական մամուլի մատենագիտություն», Երևան, 1970, էջ 34: Մեր կազմած մատենագիտական ցամկեց այսակին է. 1909թ. հունիսի 10-ից մինչև 1912թ. նոյեմբերի 5-ը՝ «Ազատամարտ», 1912թ. նոյեմբերի 5-ից թիվ 1, 2, 3, 4 (թիվ 1051)՝ «Առաջանարտ», 1912թ. թիվ 1052-1062՝ «Բյութանիա», 1912թ. նոյեմբերի 18-ից (թիվ 1063) մինչև դեկտեմբերի 23-ը (թիվ 1093)՝ «Առաջանարտ», 1912թ. դեկտեմբերի 24-ին (թիվ 1094)՝ «Ազատ», 1912թ. դեկտեմբերի 25-ից (թիվ 1095) մինչև 1913թ. հունվարի 12-ը՝ «Բյութանիա», 1913թ. հունվարի 12-15-ը՝ «Ազատ», 1913թ. հունվարի 15-ից՝ «Ազատամարտ»:

<sup>21</sup> «Ազատամարտ», 1909, թիվ 170:

<sup>22</sup> Լույս տեղում, 1909, թիվ 5:

<sup>23</sup> Տես նոյեն տեղում, 1909, թիվ 7:

<sup>24</sup> Տես նոյեն տեղում, 1909, թիվ 5, 9:

<sup>25</sup> Տես նոյեն տեղում, 1911, թիվ 730:

տառերի կվերածվեին, եթե չօգտագործվեին կյանքում, եթե պետական պաշտոնավարույան բոլոր ճյուղերում, կառավարության բոլոր բնագավառներում Օսմանյան կայսրության ժողովուրդներն իրենց թվին համեմատ ներկայացուցիչներ չունենային:<sup>26</sup> Սակայն «Ազատամարտի» նման պահանջ-առաջարկները ոչ միայն անտեսվել են, այլև հետագա տարիներին, հատկապես՝ 1912թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներից սկսած, առևկա դժգոհությունները զնալով խորացել են: Այդ տարիների հավաքածուներում չկա մի համար, որտեղ չի ներկայացների բազմաթիվ լուրեր արևմտահայերի տարրական իրավունքների ուժնահարումների, նաև՝ կոստրածների մասին: Մեղավորն, ըստ թերթի, կառավարությունն ու նրա վարած քաղաքականությունն էր. «Վա՝ յ տկարին, քանի որ իրաւոնքը նրանն է, ով ուժեղ է»:<sup>27</sup>

1912թ. կեսերին «Ազատամարտը» արձանագրում էր, որ Կիլիկիայի հայության ջարդերից հետո հայ ժողովրդի քաղաքական ապահովությունը երբեք այդքան լուրջ վտանգի և սպանալիքի տակ չի գտնվել: Այլևս կասկած չկար, որ Թուրքիայում գործում էր հայահալած ու հայասպան համակարգ: Արևմտահայն արդեն մազաշափ անգամ չէր հավատում պաշտոնական խոստումներին: Նա իր պատրիարքարանի ու քաղաքական կուսակցությունների միջնորդությամբ սպառել էր օրենսդրական բոլոր միջոցները՝ կառավարությունից խնդրելով արդարություն: Բայց իրականությունը համոզել էր, որ հայկական զավառները դուրս են ձգված օրենքի և իշխանության պաշտպանությունից:<sup>28</sup> «Ազատամարտն» առանց վերապահության, առանց երկնչելու, խստորեն դատապարտել է պետության բռնարարքներն ու պանդել, որ «Օսմանեան արինուտ երկիրը ամենն առաջ կը պահանջէ Սահմանադրութիւն՝ որ կայ անունով, բայց իրօք գոյութիւն չունի»:<sup>29</sup>

1909թ. իր գորեք բոլոր համարներում «Ազատամարտն» անդրադարձել է Կիլիկիայի հայության դաժան կոստրածներ, քննիչ հանձնախմբների գործումներյանը, նրանց կազմած գեկուցագրերին և այս խնդրում ՀՅԴ-ի դիրքորոշմանը:

Կարելի է փաստել, որ ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի պաշտոնաթերթն Աղանայի կոստրածից հետո ի պաշտոնե ընդունել է ՀՅ Դաշնակցության դիրքորոշումը երիտրուրքերի հանդեպ և հնարավորինս զուսպ է եղել զնահատականների ու լուսարանումների մեջ: Ի դեպ, «Ազատամարտը» 1909թ. թիվ 4-ից սկսած՝ տպագրել է Սիամանրոյի «Կարմիր լուրեր բարեկամէս» շարքը.<sup>30</sup> Թերբք տպագրել է նաև Աղանա, Թարսուս (Տարսոն), Սերսին, Դյորքյոլ քաղաքներում ՀՅԴ բժշկական և փաստարական մասնախմբերի գեկուցագրերը:<sup>31</sup>

Աղանա էին ուղարկվել նաև օսմանյան խորհրդարանի և կառավարության հանձնաժողովները: «Ազատամարտը» հայտնում էր, որ խորհրդարանական հանձնաժողովի նախագահ Հակոբ Պապիկյանը «կարգ մը պատճառներով, որոնց մէջ նաև՝ առողջական, բողոքած է Ատանան և ճամբայ ընկած դեպի Պոլիս»:<sup>32</sup> Սեկ-երկու օրից բարգմանաբար արտատպվում է «Իբրիհատի» թղթակցի

<sup>26</sup> Տես նոյն տեղում, 1910, թիվ 330:

<sup>27</sup> Նոյն տեղում, 1911, թիվ 682:

<sup>28</sup> Տես նոյն տեղում, 1912, թիվ 981:

<sup>29</sup> Նոյն տեղում, 1909, թիվ 3:

<sup>30</sup> Տես նոյն տեղում, 1909, թիվ 4, 8, 16, 27, 45 և այլն:

<sup>31</sup> Տես նոյն տեղում, 1909, թիվ 9, 10, 38, 83:

<sup>32</sup> Նոյն տեղում, 1909, թիվ 11:

հարցագրույցը Հ. Պապիկյանի հետ: Հայ պատգամավորը հայտնում է, որ հանձնաժողովն այլևս անելիք չունի. «Ըստ իս՝ քննուելիք բան չմնաց»: Լրագրողի հարցին, թե կոտորածի կազմակերպիչն ո՞վ էր, Հ. Պապիկյանը պատասխանում է. «Բռնապետութեան կուսակիցները: Թեև կառավարութիւնը մասնակցութիւն չունի, սակայն ինք պատճառ տուած է: Ամէն պարագայի մէջ տեղական կառավարութիւնը մասնակցութիւն ունի»: Թվարկում էր նաև կոնկրետ անուններ՝ նշելով, որ «Քրիստոնեայ ցեղերը պատճան տուած չեն»:<sup>33</sup>

1909թ. հուլիսի 4-ին տարածվում է Աղանայի կոտորածի հետաքննության զինվորական ատյանի կազմած տեղեկագիրը: «Ազատանարտուն» այն որակում է որպես զրպարտություն հայերի դեմ. «Մեղատրը հայերն են: Այսպէս կ'ըսէ զինուրական ատեանը: Բայց այդպէս չեն ըսեր փաստերը»:<sup>34</sup> Թերքը իր թիվ 25-ի «Անարդար վճիռներ» խմբագրականում կառավարությունից պահանջում է պաշտոնական զեկուցագրով հերքել զինվորական ատյանի տեղեկագիրը և կսեղ դատական գործընթաց՝ մեղավորներին պատմելու նպատակով, քանի որ արդեն կային քննիչ հանձնախմբերի կատարած քննությունների արդյունքների ամփոփումները:<sup>35</sup> Եվ հենց այստեղ է, որ երիտրութերը բաղաքական խաղի մեջ են փորձում ներքաշել ՀՅ Դաշնակցությանը. Իբրիհատը հրապարակավ՝ հասուկ շրջաբերականով, հայտարարում է, որ հայերն անմեղ էին, և Աղանայի կոտորածի մերքն ընկնում է հակասահմանադրական տարրերի ու տեղի կառավարող մարմինների վրա:<sup>36</sup>

1909թ. օգոստոսի 24-ին «Ազատամարտը» տպագրում է ՀՅ-Իբրիհատ համագործակցության մասին շրջաբերականի հայերեն քննագիրը:<sup>37</sup> Նույն համարում հրատարակվում է ՀՅ Կ.Պոլսի Պատասխանատու մարմնի շրջաբերականը, որում մատնանշվում էր պոլսահայ թերքերի («Բյուզանդիոն», «Հայրենիք», «Ժամանակ», «Արևել», «Ծիածան») քննադատական վերաբերմունքը՝ ՀՅ-Իբրիհատ համագործակցության նկատմամբ: 1909թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին թերքը շարունակաբար բանավիճում է պոլսահայ պարբերականների հետ՝ հերթելով նրանց տպագրած, իր համոզմամբ՝ սխալ տեղեկությունները նշված համագործակցության մասին:<sup>38</sup>

Զնայած համագործակցության պայմանագրին՝ ՀՅ-ն և մասնավորապես «Ազատամարտուն» ընդգծում էին, որ հարկ եղած դեպքում պիտի քննադատեն Իբրիհատին: 1909թ. հոկտեմբերի 6-ին «Ազատամարտը» տպագրում է ՀՅ- 5-րդ Ընդհանուր ժողովի շրջաբերականը՝ Կիլիկիայի դեպքերի վերաբերյալ: Դրանով մեկ անգամ ևս կոտորածի պատասխանատվությունը դրվում էր տեղական կառավարող պաշտոնյաների վրա: ՀՅ-ն պահանջում էր պատմել նրանց և կոտորածի ու թալանի դեկավարներին, նաև՝ հասուցել հայերին հասցված վնասները: «Մենք դժողոհ ենք վարչապետին բաղաքականութենէն և ամբողջ Դահիճին դիրքե՛ն Ատանայի խնդրին մէջ»<sup>39</sup>, - այսպես է եզրափակում թերքն իր քննարկումները: Բայց որքան մեծանում էին քննությունները, այնքան, ի հակալշիո դրանց,

<sup>33</sup> Նոյն տեղում, 1909, թիվ 13, 48:

<sup>34</sup> Նոյն տեղում, 1909, թիվ 22:

<sup>35</sup> Տես նոյն տեղում, 1909, թիվ 18, 25:

<sup>36</sup> Տես նոյն տեղում, 1909, թիվ 29, 42:

<sup>37</sup> Տես նոյն տեղում, 1909, թիվ 63:

<sup>38</sup> Տես նոյն տեղում, 1909, թիվ 63, 71, 75, 81-83, 86, 93, 142:

<sup>39</sup> Տես նոյն տեղում, 1909, թիվ 153:

թերքը իր ուշադրության կենտրոնում էր պահում արևմտահայերի ազգային կյանքը՝ ազգային կառույցները գործուն դարձնելու նպատակով ներկայացնելով ուշագրավ առաջարկները: «Ազատամարտն» ընթերցողներին հորդորում էր ապրել ուժեղանալու փիլիսոփայությամբ,<sup>40</sup> քանի որ ուժին է պատկանում մարդկային «ամէն ենթակայական ճշմարտութիւն, ամէն արդարութիւն, ամէն իրաւունք»:<sup>41</sup> Օրաթերքն առաջարկում էր օգտվել սահմանադրության ընձեռած ամենաաննշան հնարավորությունից, խոսափել և հրաժարվել ներքին կրվից ու երկպառակտությունից, գալառն անտեսելուց և ականջի ետև զցելուց,<sup>42</sup> համախմբման էր հրավիրում հայ ժողովրդին՝ բացատրելով, թե հարկ է ձեռք քաշել այնպիսի սիրուց, եթե սիրում ես ազգի, բայց՝ ասում ազգակցիդ:<sup>43</sup>

Կիլիկիայի ողբերգական դեպքերից հետո անգամ «Ազատամարտը» չի առաջադրում արևմտահայերի անկախանալու խնդիրը: Ընդհակառակը, հիմք է ընդունում իր սկզբնական հայեցակետը, ըստ որի՝ Թուրքիայում ծլարձակում են սահմանադրության ծիլերը, և երկիրը «Վերջ ի վերջո պիտի ոսր դներ արդարութեան և ճշմարտութեան շաւիոի վրայ»:<sup>44</sup>

Այս դիրքորոշումը բացատրվում է նրանով, որ որպես ՀՅԴ պաշտոնաթերք, ելնելով քաղաքական իրավիճակից, ուժերի հաշվառումից, օրաթերքն իրը նվազագույն պահանջ առաջադրում էր Արևմտյան Հայաստանի ներքին ինքնավարության խնդիրը օսմանյան պետության կազմում: Ու քանի որ 1908թ. երիտրուքերը թեկուի արտաքուստ կայսրությունը հոչակել էին սահմանադրական՝ ի լուր աշխարհի տարփողելով, թե իրենք հարգում են միջազգային դաշնագրերը (այդ թվում՝ Բեռլինի համաժողովի որոշումները) և պատրաստ են քարենորդումներ անցկացնել բոլոր գավառներում, ապա հասկանալի է, որ «Ազատամարտը» ուղղում էր ապահովել արևմտահայերի գեր ներքին կյանքի, կարգավորման հնարավորությունները: Ահա թե ի՞նչ ենք կարդում «Թուրքական տազնապը» հոդվածում. «Ան...կը պահանջեր ապագայի համար ոչ թե անիրականանալի անկախութիւն մը, և կամ, ինչպէս որ իմարորէն կըսեին՝ հայկական թագավորութեան յարութիւնը, այլ վարչական ինքնուրույնութիւն, ճիշտ ինչպէս որ կանխատեսած էր Միտհաթեան Սահմանադրութեան մէջ»:<sup>45</sup>

1912թ. նոյեմբերից սկսած՝ «Ազատամարտը» մշտապես անդրադառնում էր Հայկական հարցին և այդ անունով բաժին էր բացել, որտեղ տպագրվող հոդվածների, հրապարակումների պատճառով պարբերաբար կամ դատի էր տրվում, կամ փակվում իշխանությունների հրամանով, կամ էլ փոխում էր սեփական անվանումը: 1912թ. դեկտեմբերի կեսերից «Ազատամարտի» գրեթե յուրաքանչյուր համար վերլուծում էր Թուրքիայի ներքին գործերի նախարարության՝ հայկական 4 նահանգների բարենորդումների համար կազմած նախագիծը և այն գնահատում իրքն մակերեսային փաստաբուրբ: Նշվում էր, որ խմբագրակազմը պաշտպանում է հայկական նահանգների բարեկարգման անիրաժեշտությունը՝ դրա

<sup>40</sup> Տես նոյն տեղում, 1909, թիվ 2, 58:

<sup>41</sup> Նոյն տեղում, 1909, թիվ 11, 12:

<sup>42</sup> Տես նոյն տեղում, 1909, թիվ 96, 122:

<sup>43</sup> Տես նոյն տեղում, 1909, թիվ 126:

<sup>44</sup> Տես նոյն տեղում, 1909, թիվ 33:

<sup>45</sup> Նոյն տեղում, 1909, թիվ 9:

տակ հասկանալով լուրջ, արմատական ձեռնարկ, որը պիտի բարգավաճման առաջնորդեր տեղի բնակչությանը: Սակայն «Ազատամարտը» վատահ չէր, որ Թուրքիայում կիրականանար հայկական բարենորոգումների որևէ նախագիծ կամ ծրագիր՝ հիմնվելով վերջինիս անցյալի ու ներկայի պետական գործունեության փորձի գնահատման վրա:

Այսպիսով,

Առաջին, «Ազատամարտ» օրաթերթը ստեղծվել է գաղափարական, կուսակցական հիմնարքներով՝ որպես ՀՅԴ քարոզական պայքարի միջոց: Այն մինչև վերջին համար մնացել է ՀՅԴ ծրագրի, հայեցակետերի և քաղաքական ուղեգոծի կրող՝ մշտապես տպագրելով, վերլուծելով ու հանրությանը ծանոթացնելով ՀՅԴ ընդհանուր ժողովների որոշումները, կուսակցության ուղղմավարության և մարտավարության առանձնահատկությունները, տարբեր ոլորտներում կատարած աշխատանքները: Թերթի հավաքածուները կարող են օգտակար լինել ՀՅԴ պատմությունն ուսումնապիրող պատմաբանների և քաղաքական վերլուծաբանների համար և օրյեկտիվ պատկերացում տալ կուսակցության անցած ուղու՝ 1909-1915թթ. խիստ բարդ ու վճռորոշ ժամանակահատվածի մասին: Ի պատիվ «Ազատամարտի» պետք է փաստել, որ այն ապահովել է նաև բազմակարծություն՝ իր էջերում բննարկվող ցանկացած հիմնախնդրի վերաբերյալ:

Երկրորդ, «Ազատամարտը» խոսափել է դառնալ միջկուսակցական պայքարի միջոց: Լինելով կուսակցական մամուլի օրգան՝ այն չի վերածվել նեղկուսակցական պաշտոնաթերթի: Իր հրատարակության ողջ ժամանակամիջոցում եղել է արևմտահայ կյանքի բոլոր բնագավառների առաջնորդացին զարկ տվող լուրջ աղդակ: ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի պաշտոնաթերթը ոչ միայն մտահոգվել է համագոյային բնույթի հիմնախնդիրներով, այլև հետամուտ է եղել դրանց լուծմանը՝ փորձելով այդ նպատակի իրականացման համար միավորել հայ մտավոր ներուժը:

Երրորդ, «Ազատամարտը» ճկուն ու հետատես քաղաքականություն է վարել հայ մտավոր ներուժի կրողը հանրիխացող անհատների հանդեպ: Արյունքում կարողացել է իր շուրջը համախմբել ժամանակի հայ մտավորականության սերուցքը՝ վերջիններիս հնարավորություն տալով արտահայտել իրենց տեսակետները տարրանույթ հարցերի վերաբերյալ՝ քաղաքականությունից մինչև մշակույթ:

Չորրորդ, թերթի օպերատիվությունն ու բազմակարծությունն ապահովելու ունակությունները նպաստել են հայ և օտարազգի ընթերցողների լայն շրջանակ ձևավորելու գործին: Հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուց հետո առավել ուժգնացած բուրքական գրաքննության պայմաններում ձեռք բերելով իր բրդակիցներին ռազմաճակատ ուղարկելու բացառիկ բույլտվություն, «Ազատամարտը» նրանց ուղարկած բրդակցությունների և եվրոպական առաջադեմ թերթերից քաղաք տեղեկատվության միջոցով կարողացել է ապահովել ամենօրյա լրատվություն:

Հինգերորդ, «Ազատամարտը» ոչ միայն զարգացրել է դաշնակցական մամուլի ավանդույթները, այլև կատարելազործել է դրանք՝ հիմնելով ազատամարտյան ինքնատիպ լրագրության դպրոցը, որի դասերը ուսանելի են նաև այսօր:

Իրավացի էր նշանավոր հայագետ Հակոբ Միրունին, երբ գրում էր, թե ի հեճուկս բուրքական գրաքննության, «Ազատամարտի» սերունդը խիստ բեղմնավոր էր:

Անգամ Մեծ եղեռնի ընթացքում, օրաթերթի խմբագրին ու աշխատակազմի լավագույն մասին կորցնելուց հետո էլ, «Ազատամարտի» սերունդը շարունակեց իր կիսատ մնացած ծրագրերն ու անելիքները՝ Կ.Պոլսի «Շակատամարտ» օրաթերթի (1918-1924 թթ.) միջոցով:<sup>46</sup>

Հետագա տասնամյակներում ևս ՀՅԴ մամուլի օրգանները՝ ի դեմս Սփյուռքում վերընճյուղված «Ազդակի» ու «Քագինի», և տասնամյակներ անց անկախ Հայաստանի մայրաքաղաքում տպագրված նոր «Ազատամարտի», դարձան 1909-1915թթ. Կ. Պոլսում հրատարակված փայլուն օրաթերթի գաղափարական բովանդակության ու լրագրողական ավանդույթների շարունակողները:

## Summary

### THE STANDARD-BEARER OF THE WESTERN ARMENIAN PRESS On the 100th anniversary of the newspaper “Azatamart” published in Constantinople

*Mariam V. Hovsepyan*

During the years of its publication (1909-1915), the official newspaper of the Western Bureau of the ARF, “Azatamart”, being the speaker of the party published also articles of the Armenian progressive society’s representatives. Thus “Azatamart” was not a narrow-party newspaper. It guaranteed publication of different opinions. From this point of view it was the most open newspaper in the reality of Western Armenia. “Azatamart”, compared with other Armenian newspapers at the beginning of the 20th century, was unsurpassed because of its rich materials and the methods of presenting opinions. “Azatamart” taught many newspapers of that time and of the following decades the lessons of journalistic mastership and national solidarity.

<sup>46</sup> ՀՅԴ Կ.Պոլսի պարթերականների մասին ավելի մանրամասն տես Մարիամ Յովսեփյան, ՀՅԴ Կ.Պոլսի պարթերական մամուլը (1909-1924 թթ.), Եր., 2009